

## ԿՐՕՆԱԿԱՆ

## ՏՕՆ ԵՐԵՒԱՆ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ

«Զոր տեսա՜մ եւ լուա՜մ՝ պատմեմք ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ, եւ մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի»  
(Ա Յովհ. Ա 3-4):

Քիչ առաջ, այս Սուրբ Եկեղեցու կամարներու ներքեւ ընթերցուեցին այս բառերը, որոնք փառուած են Յովհաննու Առաքելոյն առաջին թղթից եւ առաջին գլխից: Յիսուսի ամենէն սիրելի աշակերտներից՝ Յովհաննէսը ասում է. «Այն ինչ որ մենք տեսանք եւ լսեցինք, ձեզի կը պատմենք, որպէս զի դուք մեզի հետ հաղորդակից դառնաք եւ մեր հաղորդակցութիւնը լինի ամբողջական Հօր Աստծոյն, Նրա Որդւոյն Յիսուսի Քրիստոսի հետ»:

Յիսուսի կեանքը քաժանող, Յիսուսի մտերմութեան մէջ ապրող առաքելները, Յիսուսի Համբարձումից յետոյ, համարձակ, յանդուգն, արի հոգիով փարգեցին Յիսուսի ճշմարտութիւնները, որովհետեւ չէին կարող իրենց մէջ պահել Լոյսը: Լոյսը իր քնութեամբ իսկ ճառագայթում է, նա ով լոյս ունի իր մէջ՝ չի կարող իր անձին եւ իր սեփական, անհատական կեանքի նեղ պարունակին մէջ պահել այդ լոյսը: Ինչպէս Աւետարանի մէջ ասուել է, լոյսը աշտանակի վրայ կը դրուի եւ ոչ թէ անկողնու տակ, ոչ էլ գրուանի ներքեւ: Յիսուսի առաքելները սկսան այնպիսի ուժգնութեամբ, յարատեւութեամբ եւ մարդկայնօրէն անկարելի թուող փառութեամբ, լոյսին ճառագայլները դառնալ աշխարհին չորս կողմերը:

Մենք՝ հոգեւորականներս, որպէս նրանց՝ առաքելների անարժան յաջորդները, մենք էլ պարտաւորութիւնը ունենք

նրանց ճանապարհին հետեւելու եւ դառնալու վկանները այն ճշմարտութիւններին, որոնք Աւետարանից են քիտում եւ եկեղեցու կեանքից են անցնում եւ մեր փորձառութեան միջից են փոխանցւում:

Աւետարանի այդ ճշմարտութիւններից շատերը ինձ համար վերստին թարմութիւն զգեցան, երբ անցնող շաբաթ ինձ վիճակուեց Աստծու օրհնութեամբ եւ տնօրինութեամբ Իմ առաջին Հովուապետական այցելութիւնը կատարելու Շիրակայ թեմում՝ Հիւսիս-արեւմտեան շրջանում մեր Հայաստան աշխարհի, այն մասը մեր երկրի, որ սրանից եօթ տարիներ առաջ երկրաշարժից այնքան խորը ցնցուեց եւ ահաւոր ողբերգութեան մի դուռ բացուեց մեր ժողովրդի կեանքում: Եօթը տարիներ առաջ այդ երկրաշարժից վնասուած, երկրաշարժի գոհ գնացած ձեր հայ եղբայրներին եւ փոյրերին ուզեցի գնալ առաջին անգամ Հովուապետական այցելութեան, որովհետեւ ցանկացայ եկեղեցու հոգածութիւնը հանդէպ ժողովրդի, յանուն Աստծու, յանուն Քրիստոսի ցոյց տալ առաւելաբար, տառապող, զրկուած, վերքից տակաւին կոտորացող մեր ազգի այն անդամներին, որոնք գտնուում են մեր երկրի Հիւսիս-արեւմտեան շրջանում:

Եւ այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սրբազնասուրբ այս քեմից ուզում ենք այդ կեանքը լինի հարազատօրէն քրիստոնէական՝ վաւերականօրէն քրիստոնէական եւ ճշմարտօրէն հայկական:



Սիրելի՛՛, Աստուած ինձ ուժ տուեց, փառք Նրան, որ ես գտնուեցի գրեթե բոլոր շրջաններում, գրեթե բոլոր ծխական այն համայնքների մէջ, որոնք կազմում են Շիրակայ թեմը: Սկսեցի գիւղերից, գնացի Ներքին Բազմաբերդ, անցայ Թալին, գնացի Մաստարա, Սառնաղբիւր, Մարալիկ, Ջորակապ, գնացի Արթիկ, Հառիճայ եւ ապա Գիւմրի, եւ Գիւմրիից յետոյ մինչեւ Աշոցքի շրջան, գնացի մինչեւ Սպիտակ, մինչեւ Վանձոր եւ մինչեւ Ստեփանաւան: Եւ ի՞նչ տեսայ. հանդիպեցի գիւղացու, չարքաշ մարդու, որ իր ձեռքերն է խառնում հողին եւ իր կեանքն է իր ձեռքերովը, իր քրտինքովը շահում: Գնացի Բաղաբաշի մարդին, տեսայ նրա բնակարանային պայմանները, հանդիպեցի մանուկներին, դպրոցական, երիտասարդ, հանդիպեցի մտաւորական, ուսուցիչ, արուեստագէտ դասակարգերին, եղայ տառապեալին հետ, հաղորդուեցի գիւղուորականներին հետ, խորհրդակցեցի մեր հոգեւորական եղբայրներին հետ, գտնուեցի մեր պետական Բաղաբաշի իշխանութեանց ներկայացուցիչներին մօտ, մի խօսքով՝ ժողովրդի բոլոր խաւերի, ժողովուրդը եւ ազգն ու եկեղեցին բաղկացնող բոլոր տարրերին հետ կարողացայ շփում հաստատել, ուղղակի հաղորդութիւն ստեղծել եւ նրանց սրտի տրոփը զգալ իմ երակների մէջ: Այդ բոլորից ես Բաղում եմ հետեւեալ գլխաւոր ճշմարտութիւնները.

Առաջին. Փառք Աստծուն, քրիստոնէական հաւատքը կենդանի է մեր ժողովրդի մէջ: Ես դա տեսայ այն սիրալիք, ջերմօրէն ընդառաջող դիմաւորութեան մէջ, որ ժողովուրդը ցոյց տուեց: Հաւատքի ծարաւը, քրիստոնէական ճշմարտութիւնների հանդէպ զգայնութիւնը առողջ է մեր ժողովրդի մէջ եւ նա, ով կ'սասի, թէ անցնող 70 տարիների ընթացքում մեր վրայ պարտադրուած վարչակարգի քերուհով հաւատքն անհետացել է՝ սխալ

է խօսում կամ սուտ է ասում: Հաւատքը առողջ է: Կը մնայ, որ այդ հաւատքը գիտակցական ապրումի, գործի, վարուելակերպի վերածուի մեր ժողովրդի բարոյական նկարագրի վերականգնման, առողջացման համար եւ իբրեւ մարդ, եւ իբրեւ հայ, քրիստոնէաշունչ պատգամներով մեր կեանքը կառավարելու իմաստութեամբը: Եւ այստեղ էր, որ տեսայ առաջին վերքը՝ «Հունձք բազում են, եւ մշակք՝ սակաւ», – ինչպէս ասում է Աւետարանի մէջ: Այո՛, պէտք ունենք մենք այդ ժողովրդին գնալու, այդ ժողովրդի կեանքին մէջ մտնելու, այդ ժողովրդի կեանքի շրջագծի մէջ Աւետարանը թարգմանելու: Մի խօսքով՝ եկեղեցին պատ, ջահ, խորան, կամար, գմբեթ լինելուց աւելի, պէտք է դառնայ ժողովրդի մէջ գործող հոգեկան ուժ, բարոյական ուսուցում, նկարագրի կազմաւորման ընթացք: Մենք պատրաստ ենք լինի այն, ինչ որ Աստուած ուզում է, ոչ թէ այն, ինչ որ մենք մեր պարագայական, ժամանակաւոր, մակերեսային, զգայարանական, հանդապաշտական ախորժակներից տարուած ուզում, որ լինենք: Ո՛չ, պէտք է լինենք այն, ինչ կերպարով մեզ Աստուած ստեղծել է եւ ուզում է, որ մենք մնանք պայծառ, անաղարտ այդ Աստուածային դրոշմին, Աստուածային կնիքին մեր վրայ անապական պահպանումով:

Սիրելիներ, այստեղ կամ աշխարհի որեւէ մի տեղ, որ նայում էք Սուրբ Էջմիածնին՝ մեր Մայր Աթոռին, այստեղից եւ յայտարարում եմ մեր ողջ ժողովրդին, որ աղէտը, որ պատահեց՝ աղէտ չի մնայ, եթէ երբէք մենք աղէտից դաս սովորել գիտենանք: Աղէտը աղէտ է այն ատեն, երբ մենք աղէտից ոչինչ ենք սովորում եւ այնպէս ենք ապրում, որ կարծէք թէ աղէտ եղած չլինի մեր կեանքում: Վիշտը, տառապանքը, նեղութիւնը մի դպրոց են մեզ



համար եւ այդ դպրոցի առաջին դասը, որ ես սովորեցի իմ այս Հայրապետական այցելութեան ընթացքում, այն է, որ մենք բոլորս հայաստանցի հայերս, ամենից առաջ, մենք պէտք է, որ մեր վերքերը մեր ձեռքերով դարձանք: Այլեւս թողնենք այն լաց ու կոծի հոգեբանութիւնը, ճնշուած մարդի, գրկուած ազգի այն հոգեբանութիւնը, որ կը կաշկանդի մեզ: Մենք տէրն ենք մեր անձերին, լինենք տէրը մեր կեանքին՝ այսինքն, մենք աշխատենք մեր վերքը մեր ձեռքերով դարձանք:

**Երկրորդ** մեծ դասը, որ ես սովորեցի եւ մենք սովորելու ենք, այն է, որ այլեւս մեր այն եղբայրները եւ քոյրերը, որոնք ուզում են իրենց եղբայրութիւնը եւ գորակցութիւնը յայտնել Լեւինականի շրջանի մեր ժողովրդին, պարտաւոր են անդրադառնալ այն իրողութեանը, որ այլեւս ամենից կարեւոր բաժինը այս գործի մէջ պէտք է լինի բնակարանաշինութեան գործը, արդիւնաբերական միջոցների ստեղծումը եւ ոչ թէ շարունակումը այն շտապ օգնութեան, որ սկսուեց երկրաշարժի աղէտի օրից եւ շարունակում է որոշ աստիճանով մինչեւ այսօր: Ես տեսայ, թէ որքա՛ն ընտանիքներ տակաւին գտնւում են առանց բնակարանի, տակաւին վթարուած տների մէջ են ապրում: Տեսայ դիմացը նաեւ այն սփանչելի գործը, որ կատարուել է՝ շէնքեր են բարձրացել, փլատակ շէնքեր են վերստին նորոգուել: Իմ մտքից անցաւ այն պատկերը, որ լոյսի եւ խաւարի խաղի պատկերն է. մի կողմ մութ էր, միւս կողմ լոյս էր:

Լոյսը նոր շինուածն էր, մութը այն էր, որ տակաւին մնում էր երկրաշարժի վերքի արիւննոտ բաժնում: Հետեւաբար, մենք պէտք ունենք այլեւս ե՛ւ արտասահմանում ե՛ւ այստեղ, լծուել շինարարական գործի, որովհետեւ դա իր մէջ ունի երկու բարիքներ. առաջին՝ հանգստաւէտ, չեմ ասում շռայլ, գէթ

բնականոն պայմանների մէջ ապրողը նուազ կը տառապի, քան խեղճ պայմանների կամ բնականների մէջ ապրողը: Մենք երջանկութեանը աւելի նպաստած կը լինենք բնակարան հայթայթելով, քան մի պատառ հաց տալով: Երկրորդ՝ մենք աշխատանք, գործ ստեղծած կը լինենք անգործ մնացած մեր եղբայրներին եւ քոյրերին համար, ուրիշ խօսքով՝ կրկնակ բարիք ունի բնակարանաշինութեան եւ արդիւնաբերական միջոցների ստեղծման կենսական գործը: Այստեղ ես ուզում եմ նշել, որ սփանչելի գործ է կատարել «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամը. տեսայ նրանց ջանքերով շինուած հարիւրաւոր տները եւ մենք պէտք ունենք մեր բոլորի աշխատանքները համակարգելու, ներդաշնակելու, միութիւն ստեղծելու եւ ոչ թէ ցրիւ կերպով, իրարից անտեղեակ կերպով մեր օգնութեան եւ աջակցութեան ու գորակցութեան գործը յառաջ տանելու:

**Երրորդ**՝ ես սովորեցի այն դասը, որ մենք եթէ երբեք ուզում ենք մեր ժողովուրդը այս հողին կապուած պահել, պէտք ունենք մեր Հայրենիքի շինարարութեան այն առողջ փառափառութեան մշակումին, որով մենք այլեւս հողը մեր սեփականը կը նկատենք, մեր գերագոյն հարստութիւնը: Մի մեծ դեկալար մի մեծ ազգի ասել է. «Մի ազգ բաղկանում է երեք բաներից՝ հողը՝ Հայրենիքը, ժողովուրդը եւ օրէնքները»: Վերջին երկուսը կը փոխուեն՝ ժողովրդի կեանքն ու օրէնքներն էլ կը բարելաւուեն՝ կը փոխուեն: Միակ այն բանը, որ կը մնայ անփոփոխելի դա հողն է, երկի՛րն է: Եղբայրներ, մենք դուրս ենք եկել նոր Հայոց ազգի դէմ գործուած ցեղասպանութեան 80 ամեայ ոգեկոչման օրերից. Ապրիլի 24ն էր դա: Մէկ ու կէս միլիոն հայ մարդ զոհ տուեցին: Փառք Տիրոջ, հազար փառք Իրեն, որ մենք մէկ ու կէս միլիոնի թիւը վերագտանք եւ աւելիով: Բայց հողը, որ գնաց՝ Արեւմտեան



Հայաստանը, ահաւասիկ այսօր տակաւին մեզ համար կորսուած հող է: Հայրենիքն է, որի շինութեան գործին պէտք է մենք լծուենք, որովհետեւ Հայրենիքը սոսկ հողը չէ, հողին վրայ մեր խառնած քրտինքն է, հողին մէջ մեր թափած արիւնն է: Մի խօսքով, մեր ամբողջ էութիւնն է, մեր ազգային ինքնութեան եւ արժանապատուութեան զգացումն է՝ դա է, որ իր հողը կը վերածի Հայրենիքի: Եւ դրա համար այսօր Մենք կոչ ենք ուղղում մեր ողջ ժողովրդին Մայր Աթոռի այս Սուրբ քեմից ե՛ւ այստեղ Հայաստան ե՛ւ ի սփիւռս աշխարհի: Երկրաշարժի առիթով մեր ժողովուրդը յուզուեց, շարժուեց եւ այն ատեն եւ ըսի, եթէ Հայաստանում երկրաշարժ տեղի ունեցաւ, ողջ աշխարհում մարդաշարժ տեղի ունեցաւ, հոգեշարժ տեղի ունեցաւ: Այն ատեն եղան քաղմաթիւ, գրեթէ անմասն չմնաց որեւէ մի հայ, որ իր բաժինը չբերեր այն գօրակցութեան գործին յատուկ նուիրահաւաքութիւններով եւ յատուկ հանգանակութիւններով: Եւ, եթէ կան տակաւին այդ գումարներից մնացած գումարներ օր առաջ փոխանցուեն դրանք, որպէս զի Հայաստանի վերաշինութեան գործը աղէտի գօտու մէջ առաւել թափով առաջ երթայ եւ մենք պայծառ դիմագծով աշխարհին ներկայանանք, որպէս զի նոր շինուած շէնքերի փայլը տարածուի եւ վնասուած շէնքերի վերքը դարմանուի մեր ժողովրդի կեանքում:

Ահաւասիկ, թէ ի՞նչ եզրակացութիւնների եմ եկել եւ այս օրերին, երբ վերադարձել եմ Շիրակայ թեմին իմ տուած առաջին այցելութիւնից: Այնտեղ եկեղեցիներ ունենք, որոնք կը կարօտեն անմիջական վերանորոգութեան: Այստեղ ունենք դպրոցներ, որոնք պէտք ունեն խնամքի: Եթէ մենք կարենանք մեր հասարակական ընդհանրական հաստատութիւնները գօրացնել, նրանց

միջից մի անհատները եւ ընտանիքները էլ կը գօրանան:

Ահա, թէ ինչ տեսանք եւ ինչ լսեցինք, եւ այսօր պատմում ենք ձեզ, հաղորդում ենք ձեզ, որպէս զի դուք էլ հաղորդակից դառնաք ողջ աշխարհում այս բոլոր իրականութիւններին եւ նշարտութիւններին եւ ըստ այնմ ձեզնից իւրաքանչիւրը կատարէ իր պարտականութիւնը ի՛ր ձեռով եւ ի՛ր չափով: Այս կիրակին Մայր Աթոռում եւ հռչակում եմ Հիւսիս-արեւմտեան մեր հայ ժողովրդի կիրակի: Այսօր մեր աղօթքների սիրտը նրանք թող գրաւեն, նրանք՝ ովքեր այդ աղէտի գոհները եղան: Անցեալ կիրակի ճիշտ այս ժամին գմբեքահատեալ եւ վերստին գմբեքաւորեալ Եօթվերջ Սուրբ Աստուածածնի եկեղեցում էի եւ այնտեղից էի խօսում մեր ժողովրդին ջանալով նրանց հաւատք, վստահութիւն եւ լաւատեսութիւն ներշնչել: Այսօր, մի շաքաթ ետք, այս Մայր Տաճարում սիրտս քանալով կոչ եմ անում մեր ողջ ժողովրդին, որ իր մտածումների եւ իր արարքների մէջ հայրենաշինութեան գործը նկատի ունենայ եւ մոռացութեան չտայ երկրաշարժից վնասուած մեր Հայրենիքի այդ բաժինը եւ մեր ժողովրդի սիրեցեալ գաւակները Գիւմրիի, Սպիտակի, Ստեփանաւանի, Վանաձորի եւ նաեւ այլ բոլոր գիւղերի մէջ որոնց պատկերը իմ աչքերիցս երբեք պիտի չը հեռանայ: Աստուած գօրացնի նրանց եւ գօրացնի ձեզ բոլորիդ «ի խնամս մարդասիրութեան իւրոյ» յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ